

տէն՝ Հայերէն եւ յունարէն կարդալու նաեւ Տարսոնի իր եկեղեցւոյն մէջ, ուր Յունաց բաղմութիւն մը ներկայ կ'ըլլար Հայոց հետ։ Իսկ իշխանը թոյլ չտուաւ, կ'ըսէ ինքն իսկ՝ անոր ուղղած նամակին մէջ. ու ներսէս չընդգիծացաւ անոր հրամանին (236-237)։ Սակայն այդ պաղատան հետզհետէ դարգացաւ ու զօրացաւ Կիլիկիոյ մէջ, գուցէ իր իսկ թելադրութեամբ. եւ Վիլլերբրանդ՝ որ 1212ին առաջիկայ կը գտնուէր հոն ջրօրհնէքի հան-

դէսին, եւ Յոյները խառն Հայերու հետ, տեսաւ՝ որ «ընթեոնուն զաւետարանս եւ զթողութիւն յունարէն եւ հայերէն» (5)։ Որով այդ նորոյթն ալ երեւցաւ ժամանակ մը Հայ արարողութեան մէջ, լսեցնելով հայ աղանջներու՝ Դ. զարէն ի վեր լուծ հելլեն բարբառը, զոր գոնէ Կիլիկիոյ ազնււական ու դարգացած դասը կը հասկնար, ինչպէս ունինք փաստեր։

Հ. ՎԱՐԴԱՆ ՀԱՅՈՒՆԻ

(5) Հ. Դ. Ալիշան, Սիսուան, 476։

(Շարունակելի)

Յ Ի Շ Ա Տ Ա Կ Ա Ր Ա Ն

Մարտի 26 եւ 27 օրերուն, գարնանային առաջին ծիծեռնակներուն հետ, վեներիկ այցելեց Էջմիածնի Կաթողիկոս՝ ՎԷՀ. Տ. Տ. ՎԱԶԳԷՆ Ա. ՊԱԼՃԵԱՆ։

Հայաստանէն սիրոյ ողջոյններ եւ նուէրներ բերաւ Սուրբ Ղազարու Ուխտին, եւ ջերմօրէն պատուեց Մեծն Միսիքարի եւ Ալիշանի խնկաւէտ շիրիմները։

Նշանակալից նառերով դրուատեց Միսիքարեան մշակութային եւ կրթական գործունէութիւնը, ի տես Ս. Ղազարի ազգային արժէքաւոր գանձերուն, եւ Մուրատ-Ռափայէլեան վարժարանի մէջ քափուած ազգանուէր վաստակներուն։

Վանքի Ոսկեմատեանին մէջ յուզումով արձանագրեց ամմոդանալի տողեր։

Յաջորդ թիւով՝ մանրամասնութիւնները այս աննախընթաց այցելութեան։

ԹՈՂՈՒԹԻՒՆ

Խնդրեցի ես մարդկութենէն թողութիւն
Վերադարձող ինչպէս որդին անառակ.
Ես չեմ կրնար վիշտով իջնել հողին տակ
Եւ սուրբի պէս ակնկալել յարութիւն։

Ինձ այն ատեն պիտ' ըլլայ հողն օրօրան
Երբ բաժնուիմ շողերու պէս աշխարհէն.
Երբ ծաղիկներն ինձ համար միշտ հառաչեն
Եւ զիս փնտռէ ամէն օր լոյսն առաւելան։

Սիրտըս խաղաղ, ես ոչ մէկուն թշնամի
Միշտ օրհնելով պիտի յիշեմ այս աշխարհն.
Եւ եղբայրներ, ձեր ներումի սուրբ բարբառն

Երկինքի մէջ պիտի պարզեմ ծիրանի.
Եւ երբ փորեն շիրիմիս քով ա՛յլ չիրիմ,
Պիտի՛ դռնէմ, բարի եկար, եղբայր իմ։

ԵՍ ԿԸ ՄԵԿՆԻՄ

Ես կը մեկնիմ մաս մ'հողիէս թողնելով,
Ուղիներէ ուղիներ,
Ինձ կը նայի արեւն որբի աչքերով,
Դէմքին քաշած սեւ ամպեր։

Իմ արտէս ալ կը պարպուին տենչ ու խոհ,
Ցամքելու մօտ առուի պէս,
Կը սաւառնի աշխարհս դէպի երեկոյ
Ըսկըսելով աչքերէս։

Մինչ սիւղը դեռ կ'արտասանէ քերթուածներս
Շուքերուն մէջ թափանցիկ,
Կ'առեւանդեն ծաղիկներն իմ երազներս

Իբրեւ վախճան եւ դալիք։
Ես կը մեկնիմ, ես կը մեկնիմ թողնելով
Ամէն տեղ սէր ու գորով։

